ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

ՀՀ ՏԿԵՆ կարիքների համար կազմակերպված «ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-26/10» ծածկագրով գնման ընթացակարգի* գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ

մեկնարկ՝ 29.01.2026թ.
ժամը 15:00
ավարտ՝ 13.02.2026թ.
ժամը 12:30

Գնահատող հանձնաժողովի կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային կառավարման վարչության պետ (հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ)	Աննա Իվանյան

Հանձնաժողովի անդամներ՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Աննա Վարդանյան
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղական ինքնակառավարման հարցերի համակարգման բաժնի պետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Կարեն Բակոյան
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներդրումային ծրագրերի համակարգման, տնտեսագիտական վերլուծության և մոնիթորինգի վարչության ներդրումային ծրագրերի համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)	Մարիամ Բադալյան
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)	Ամիդա Բաբուջյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)	Զանուշ Հայրապետյան

«ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-26/10» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտերի բացման և գնահատման նիստի օրակարգը

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գնման գների վերաբերյալ:
2. Տեղեկություն՝ Ընթացակարգի հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին:
3. Տեղեկություն Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտ ներկայացրած մասնակցի վերաբերյալ:
4. Տվյալներ՝ Ընթացակարգին էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկի մասին:
5. Տվյալներ՝ Ընթացակարգի էլեկտրոնային հայտը կազմելու և ներկայացնելու՝ Ընթացակարգի հրավերով (այսուհետ՝ Հրավեր) սահմանված վավերապայմաններին համապատասխան լինելու մասին:
6. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի հրավերով սահմանված ծառայությունների բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

---

* Սույն գնումն իրականացվում է համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի, 20-րդ հոդվածի 2-րդ մասի, 43–րդ հոդվածի, 44-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի:

1. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գնման գների վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման գները.

Չափաբաժինների		Չափաբաժնի անվանումը
համարները	գնման գինը	
1	2 059 200	Տեղական ինքնակառավարման մարմինների վերապատրաստման ծառայություններ
2	11 935 000	Համայնքային ծառայողների վերապատրաստման ծառայություններ
3	600 000	Տարածքային կառավարման մարմինների աշխատակիցների հեռավար վերապատրաստման ծառայություններ

2. Տեղեկություն՝ Ընթացակարգի հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

2.1 Ընթացակարգի հայտը Armeps (www.armeps.am) էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով բացվել է սահմանված ժամկետում՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետին՝ **2026 թվականի հունվարի 29-ին՝ ժամը 15:00-ին**:

3. Տեղեկություն Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ

3.1 Սահմանված կարգով ներկայացվել է 1 հայտ, որն ընդունվել է Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգի կողմից և համարվել հետագա գնահատման համար ընդունելի:

3.2 Ընթացակարգի շրջանակներում հայտ ներկայացրած մասնակցի տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները՝

№	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցեն	ՀՎՀՀ	Էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար
1	«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ	ՀՀ ք. Երևան, Կիևյան-8	00035088	paara.akademia.gnumner@mail.ru Հեռ. +374 10 222 620

4. Տվյալներ՝ Ընթացակարգին էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակցի առաջարկած գնի մասին

4.1 Ընթացակարգի շրջանակներում մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը.

Չափաբաժին 1: Տեղական ինքնակառավարման մարմինների վերապատրաստման ծառայություններ

№	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	**«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ**	**1 716 000**	**343 200**	**2 059 200**

Չափաբաժին 2: Համայնքային ծառայողների վերապատրաստման ծառայություններ

№	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ	9 945 833.33	1 989 166.67	11 935 000

Չափաբաժին 3: Տարածքային կառավարման մարմինների աշխատակիցների հեռավար վերապատրաստման ծառայություններ

№	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ	500 000	100 000	600 000

4.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են /ճիշտ են/:

5. Տվյալներ՝ Ընթացակարգի էլեկտրոնային հայտը կազմելու և ներկայացնելու՝ Հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան լինելու մասին:

5.1 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են և համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

6. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

6.1 «Գնումների մասին» օրենքի նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

6.2 Սույն ընթացակարգի վերաբերյալ հիմնավորումներ չեն տրվել:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

7.1 Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով հայտի գնահատման արդյունքները Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել՝ «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ին:

7.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետը՝ անգործության ժամկետ չսահմանել:

7.3 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

7.4 Ընթացակարգի ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

7.5 Պայմանագիր չկնքվելու դեպքում Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրն ու ժամը սահմանել այդ իրադարձության հայտնի լինելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 12:00-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5 դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրությունները՝

Հանձնաժողովի նախագահ՝	**Աննա Իվանյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Աննա Վարդանյան**	.....
	Կարեն Բակոյան	.....
	Մարիամ Բադալյան	.....
	Աիդա Բաբուջյան	.....
Քարտուղար՝	**Զանուշ Հայրապետյան**	.....